

ԻՆՏԵՆՆԵՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 338.2«312» (479.25)

Ջ.Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Համաշխարհային տնտեսության ներկա անորոշ ու հախուռն զարգացումները լեցուն են բազմաշերտ ռիսկերով ու ազգային տնտեսական անվտանգությանն ուղղված բազմաբնույթ մարտահրավերներով: Վերջիններս առավել խորն ու սոցիալ-տնտեսական բազում հակասություններով են դրսևորվում հատկապես ՀՀ պարենային անվտանգության ապահովման տիրույթում: Խիստ մտահոգիչ են պարենային հաշվեկշիռը բնութագրող ցուցանիշները, մասնավորապես, ցորենի ինքնաբավության, երկրի՝ պարենի ներմուծումից կախվածության մակարդակը և այլ ցուցանիշներ:

Այս խորապատկերին Հայաստանի Հանրապետության ռազմավարական զարգացումների առաջնահերթություններում հարկ է կարևորել պարենային անվտանգության ապահովումը, միջոցառումներ ձեռնարկել ոլորտում առկա ներուժի առավել արդյունավետ օգտագործման ուղղությամբ, ինչպես նաև դիվերսիֆիկացնել պարենային հաշվեկշռի և՛ աշխարհագրական, և՛ ապրանքային կառուցվածքը:

Առանցքային բաներ. Ազգային տնտեսական անվտանգություն, մակրոտնտեսական ցուցանիշներ, պարենային անվտանգություն, պարենային հաշվեկշռի ցուցանիշներ, ցորենի ինքնաբավության մակարդակ, ներմուծումից երկրի կախվածության աստիճան:

Ներածություն: Ազգային անվտանգությունը պայմանավորված է ազգային շահերի իրացման մակարդակով: Ազգային անվտանգության շահերը կարելի է սահմանել որպես անհատի, պետության և հասարակության գոյության, երկրի տնտեսական և քաղաքական անկախության, քաղաքակրթական արժեքների պահպանման և կայուն զարգացման համար գերակա նշանակություն ունեցող նյութական, հոգևոր և սոցիալական պահանջմունքների իրացման համակարգ: Այն, պետության՝ ազգի կենսականորեն կարևոր շահերի ապահովմանն ուղղված միջոցառումների համախումբ է՝ ներկա և հեռանկարային զարգացման տիրույթում: Այս խորապատկերին կարևորվում է ազգային տնտեսական անվտանգությունը: Ցանկացած երկրի տնտեսական անվտանգությունը ենթադրում է տնտեսության այնպիսի իրավիճակ, որը նպաստում է երկրի սոցիալական, քաղաքական և տնտեսական անհրաժեշտ մակարդակի ապահովմանը և նորամուծությունների զարգացմանը, ինչպես նաև արտաքին և ներքին հնարավոր սպառնալիքների ազդեցությունից երկրի տնտեսական շահերի իրացմանը:

Ազգային տնտեսական անվտանգության կարևորագույն տարրերից է պարենային անվտանգությունը: Նույնիսկ 21-րդ դարում աշխարհի, նաև ՀՀ բնակչության պարենային ապահովման ամենակարևոր մարտահրավերներից մեկն ուղղակի իմաստով՝ հացի խնդիրն է: Պարենային ապրանքների, մասնավորապես ցորենի գների շարունակական աճը համաշխարհային տնտեսության մեջ համավարակից հետո և մասամբ ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ստեղծել էին և շարունակում են ստեղծել բարդ իրավիճակ: ՀՀ-ում պարենամթերքի շուկայում անհանգստացնող են թե՛ ցորենի արտադրության ո՛չ բավարար ծավալները, թե՛ ներմուծման աշխարհագրական կառուցվածքը, թե՛ ներմուծումից երկրի կախվածության բարձր մակարդակը:

Թեմայի արդիականությունը և հետազոտության նպատակը: Համաշխարհային տնտեսության գլոբալ հիմնախնդիրներից է երկրի պարենային անվտանգության պահովման հիմնախնդիրը: Մեր օրերում այն շարունակում է մնալ արդիական և հրատապ լուծումներ պահանջող: Հետազոտության նպատակն է՝ ՀՀ պարենային հաշվեկշռի ներկա ցուցանիշների վիճակագրական վերլուծության միջոցով ոլորտում առկա հիմնախնդիրների բացահայտումը, մասնավորապես հիմնական պարենամթերքի՝ ցորենի ինքնաբավության ցածր մակարդակի, երկրի՝ ցորենի ներմուծումից բարձր կախվածության, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում առկա ներուժի անբավարար և միաժամանակ ցածր արդյունավետությամբ օգտագործելու համատեքստում:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Հետազոտության շրջանակներում խնդիր է դրված ուսումնասիրել ՀՀ ազգային տնտեսական անվտանգության կարևորագույն և վճռորոշ ոլորտներից մեկը, հատկապես COVID-19 համավարակի և ռուս-ուկրաինական հակամարտության տնտեսական ազդեցությունների տիրույթում, բացահայտել մասնավորապես, պարենային անվտանգության ապահովման առկա մարտահրավերները և ներկայացնել ստեղծված իրավիճակում դրանց դիմագրավերու հնարավորությունները: Վերջինս կարող է խիստ կառուցողական և արդյունավետ լինել ՀՀ Կառավարության կողմից իրականացվող հետագա տնտեսական քաղաքականության մշակման գործընթացներում:

Խնդրի լուծման նորույթը պայմանավորված է ՀՀ պարենային անվտանգության ապահովման ոլորտում առկա իրավիճակի նորագույն դրսևորումների, հատկապես ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով առաջացած նոր մարտահրավերների լուսաբանումը, դրանց մեղմմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայ և արտասահմանյան տնտեսագետների՝ հետազոտվող թեմային նվիրված

գիտական հրապարակումներն ու աշխատությունները, ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի, միջազգային կազմակերպությունների և պաշտոնական վիճակագրական այլ հրապարակումներ: Հետազոտության մեջ կիրառվել են վիճակագրական վերլուծության տարբեր մեթոդներ:


Հետազոտության արդյունքները: Յուրաքանչյուր երկրի պարենային քաղաքականության նպատակն է՝ երկրում պարենամթերքի արտադրության, արտաքին առևտրի, պաշարների ստեղծման և վերամշակման ոլորտներում ծագած խնդիրների արդյունավետ լուծումը, ինչպես նաև գյուղական բնակավայրերի սոցիալական զարգացումը [1]: Պաշտպանական անվտանգային տերմինների բացատրական բառարանում նշվում է, «Պարենային անվտանգությունը ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ է, որը բնութագրում է պետության տնտեսության այն վիճակը, երբ ապահովված է երկրի պարենային անկախությունը և բնակչության համար երաշխավորված է ֆիզիոլոգիական նորմերին համապատասխանող, սպառողների առողջության համար անվտանգ սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը: Պետության պարենային անկախությունը կենսականորեն կարևոր սննդամթերքների ներմուծման անհնարինության կամ անբավարարության դեպքում և պարենային ճգնաժամի կանխարգելման նպատակով սննդամթերքի տեղական արտադրության անհրաժեշտ մակարդակի ապահովման հնարավորությունն է» [2]:

Նշյալ հարցադրումների շրջանակներում, նախ արձանագրենք, որ ՀՀ-ում 2022թ. համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալի ինդեքսը կազմել է 112.6%: ՀՆԱ-ի ծավալն ընթացիկ գներով 2022թ. կազմել է 8 496 777.9 մլն. դրամ, այդ թվում գյուղատնտեսության ծավալը՝ 880 637.9 մլն. դրամ կամ ՀՆԱ-ում 10.4%: 2022թ. ՀՆԱ-ի 12.6%-ով աճին (112.6%) զուգընթաց արձանագրվել է գյուղատնտեսության 0.7%-ով նվազում (99.3% [3]): ՀՀ տնտեսական աճի տեմպերը, որոշակի նվազման միտումով պահպանվել են նաև 2023թ. հունվար-հուլիս ամիսների ընթացքում: Այսպես, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ տնտեսական ակտիվության ցուցանիշն աճել է 10,4%-ով [4], արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 0,5%-ով, շինարարության ծավալը՝ 17,2%-ով, առևտրի շրջանառությունը՝ 23%-ով, ծառայությունների ծավալը՝ 14,9%-ով, արտաքին առևտրաշրջանառությունը՝ 62,6%-ով, ընդ որում՝ արտահանումը՝ 62,1%-ով, իսկ ներմուծումը՝ 63,0%-ով: Սպառողական գների ինդեքսը՝ 3,6%-ով: Ակնհայտորեն, 2023թ. 7ամիսների ամփոփ զարգացումը բնութագրող ցուցանիշները 2023թ. հունվար-հունիսի համեմատ գրանցել են նվազման միտում, հատկապես անհանգստացնող է արդյունաբերական արտադրանքի նվազման փաստը, այն նվազել է 1%-ից մինչև 0,5%: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի

ծավալների աճը 2023թ. հունվար – հունիսին կազմել են 2% [5]: Մակրոտնտեսական ցուցանիշների սուկ հպանցիկ դիտարկումն արդեն իսկ ահազանգում է հնարավոր ռիսկերի առկայության մասին: Սակայն, մեր հետազոտության թիրախն հատկապես գյուղատնտեսության ոլորտն է: Այս տեսանկյունից, նշենք, որ գյուղատնտեսությունն այն ոլորտն է, որը գերազանցապես նպաստում է պարենային խնդիրների լուծմանը՝ վերջինիս համակողմանի սոցիալ-տնտեսական հետևանքներով հանդերձ: Եվ ո՛չ միայն... Հայաստանի դեպքում գյուղատնտեսության ոլորտի զարգացումը կարևոր է նաև այն պատճառով, որ պարենային խնդիրների լուծմանը զուգընթաց՝ այն նաև նպաստում է արդյունաբերության ոլորտի զարգացմանը:


Սակայն, նույնիսկ 21-րդ դարում աշխարհի, նաև ՀՀ բնակչության պարենային ապահովման ամենակարևոր մարտահրավերներից մեկն ուղղակի իմաստով՝ հացի խնդիրն է: Բավական է միայն արձանագրել աղքատության մակարդակն արտացոլող ցուցանիշները [6] թե՛ համաշխարհային տնտեսության մեջ, և թե՛ ՀՀ-ում՝ հատկապես վերջին տարիներին: Ուստի և անվիճելի է այն հարցադրումը, որ ազգային տնտեսական անվտանգության ապահովման կարևորագույն ռիսկերը և մարտահրավերները պարենային անվտանգության ապահովման տիրույթում են: ՀՀ ՎԿ-ի «Պարենային ապահովություն և աղքատություն, 2022թ. հունվար-դեկտեմբեր» հրապարակումից [7] տեղեկանում ենք, որ մեր երկրում պարենային անապահովության բազմաթիվ հիմնախնդիրներ կան՝ իրենց սոցիալ-տնտեսական ծանր հետևանքներով: Սակայն, մեր կարծիքով, աշխարհի գրեթե բոլոր երկրներում շղթայական փոխազդեցությունների հետ կապված ամենակարևոր պարենամթերքը ցորենի արտադրությունն է, դրա արտահանման ու ներմուծման ծավալների դինամիկան և ամենակարևորը՝ ինքնաբավության աստիճանը տվյալ երկրում: Ուսումնասիրելով ցորենի ինքնաբավության մակարդակը ՀՀ-ում 2019-2021թթ. [7], հանգում ենք այն եզրակացության, որ այս ցուցանիշի գծով կարելի է արձանագրել պարենային անվտանգության էական ռիսկեր՝ (տես՝ նկ. 1): Իսկ, որևէ պարենամթերքի գծով լինել ինքնաբավ, նշանակում [8] է, թե տվյալ երկրում սեփական միջոցների հաշվին, որքանով է բավարարվում երկրի տվյալ ապրանքի նկատմամբ պահանջարկը: Նկ.1-ից ակնհայտորեն տեսանելի է, որ ՀՀ-ում ցորենի ինքնաբավության մակարդակը ցածր է, ավելին, վերջին տարիներին գրանցվել է էական նվազում: Մասնավորապես, եթե 2019թ. ՀՀ-ում բավարարվել է ցորենի նկատմամբ երկրի պահանջարկի 25,9%-ը, ապա այն 1,5տոկոսային կետով շարունակել է նվազել է 2020թ. և 1,2տոկոսային կետով՝ 2021թ.: Այսինքն, 2019թ. համեմատ 2,7տոկոսային կետով ցորենի ինքնաբավության մակարդակը նվազել է 2021թ.: Կարծում ենք, խոսքերն

ավելորդ են, չնայած այն հանգամանքին, որ նման անկման պատճառը գերազանցապես արցախյան 44-օրյա պատերազմից հետո Արցախից ներկրվող ցորենի ծավալների խիստ կրճատումն էր, նաև հետհամավարակային իրավիճակը երկրում:




Նկ. 1. Գորենի ինքնաբավության մակարդակը ՀՀ-ում 2019-2021թթ.[7]

Ավելին, երբ ուսումնասիրում ենք պարենամթերքի արտահանման և ներմուծման կառուցվածքը, ապա կարող ենք արձանագրել այն մտահոգիչ իրավիճակը, որն առկա է պարենամթերքի արտահանման կառուցվածքում, այն է՝ հիմնականում արտահանում ենք կոնյակ, գինի, հանքային ջուր, միրգ, պանիր և ձու, ընդ որում առաջին հորիզոնականում մրգի արտահանումն է՝ 96 278.7 տոննա 2022թ., երկրորդում՝ կոնյակի՝ 80 497.6տոննա և երրորդ հորիզոնականում՝ հանքային ջուր՝ 27 971.6տոննա, նույն ժամանակահատվածում: Նշենք, որ 2018թ. համեմատ պարենամթերքի երկու տեսակների արտահանման ծավալներում նկատվել է դրական դինամիկա, մասնավորապես ավելացել է կոնյակի արտահանման ծավալները՝ 54%-ով և հանքային ջուրը՝ 52%-ով: Մինչդեռ մրգի արտահանման ծավալներում գրանցվել է արտահանման ծավալների 20% նվազում: Պարենամթերքի ներմուծման կառուցվածքն ուսումնասիրելիս [7] նկատում ենք, որ առաջին հորիզոնականում [4] ցորենի ներմուծումն է, 2022թ. այն կազմել է 364 619.0 տոննա: Ի դեպ, 2018թ. համեմատ նկատելի է ցորենի ծավալների ներմուծման աճ, մոտ 11%-ով: Ավելորդ չենք համարում նշել, որ 44-օրյա պատերազմից հետո, 2021թ նկատվեց ցորենի ծավալների ներմուծման կրճատում 2020թ. համեմատ՝ 22,2%-ով: Իսկ արդեն 2022թ. այն գերազանցեց 2021թ. ներմուծման ծավալները մոտ 34%-ով (նկ. 2.):



Նկ. 2. Ցորենի ներմուծման, արտադրության և արտահանման ծավալները (հազար տոննա), 2019-2021թթ.[7]

Պարենային անվտանգությունն ապահովող այս հիմնական գյուղմթերքի գծով առավել իրատես դատողություններ կատարելու նպատակով, հաշվարկել ենք ՀՀ-ում ցորենի ներմուծումից կախվածության աստիճանը (տես՝ նկ. 3) [9]: Ցուցանիշը ցույց է տալիս ցորենի նկատմամբ պահանջարկի բավարարման մակարդակը ներմուծման հաշվին: Նկ. 3-ի տվյալները վկայում են, որ վերջին երեք տարիներին ՀՀ-ում ցորենի ներմուծումից կախվածության մակարդակն աճել է, եթե 2019թ. այն կազմել է 74,9%, ապա 2021թ.աճել է ևս 4,1%-ով, կազմելով 79%:



Նկ. 3. ՀՀ-ում ցորենի ներմուծումից կախվածության աստիճանը (%) 2019-2021թթ.[9]

Արձանագրենք, որ պարենամթերքի ներմուծման կառուցվածքն ամենևին դիվերսիֆիկացված չէ, (արտահանման ծավալներն այնքան չնչին են, որ դրանց վերաբերյալ զուր է դատողություններ անելը) ավելին այն չի երաշխավորում հուսալի և երկարաժամկետ դիվիդենդներ՝ հիշյալ պարենամթերքի ներմուծման պարագայում: Ասվածը վկայում է ՀՀ գյուղատնտեսության ոլորտի ո՛չ մրցունակ ներուժի մասին: Ուստի, հարկ է ոլորտային հնարավորություններն ուղղել հատկապես այն պարենամթերքների արտադրությանը, որոնց ինքնաբավության մակարդակը դեռևս շատ ցածր է և պարունակում է լուրջ և սոցիալ-տնտեսական բազում ռիսկեր՝ պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Տարածաշրջանային, աշխահաքաղաքական այս բարդ ու անորոշ իրավիճակներում, կարծում ենք այս ցուցանիշն ահազանգում է պարենային անվտանգության խաթարման այն հնարավոր ռիսկերը, որ նշմարելի են այսօր: Է՛լ չենք ներկայացնում գյուղատնտեսության ոլորտի անմխիթար վիճակը, կապված ոլորտում ցածր աշխատանքի արտադրողականության, հողի սեփականաշնորհման մինչ օրս գործող օրենսդրական դաշտի անկատարության, 44-օրյա պատերազմից հետո Արցախից ներմուծումների ահռելի չափերով կրճատման հետ: Ավելին, ՀՀ սահմաներձ շրջաններում գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար բավարար պայմանների բացակայությունը, հատկապես այն շրջաններում, որոնք աչքի են ընկնում հացահատիկի արտադրության ամենամեծ ծավալներով: Մասնավորապես, 2022թ. արտադրվել է ցորենի համախառն բերքից (138,6հազ.տոննա)՝ Սյունիքի մարզում՝ 23,3 հազ.տոննա, Գեղարքունիքում՝ 16,2 հազ.տոննա: Ի դեպ, հացահատիկի արտադրության ծավալներով առաջին հորիզոնականում Շիրակի մարզն է՝ 30,6հազ.տոննա և երկրորդում՝ Լոռու մարզը՝ 27,3 հազ.տոննա [3]: Չնայած այս իրողությանը, ինչպես արդեն նշեցինք, ցորենի ինքնաբավության աստիճանը ՀՀ-ում դեռևս անասելի ցածր մակարդակի վրա է և հղի է պարենային անվտանգության ապահովման բազում ռիսկերով: Պատահական չէ, որ ՀՀ կառավարությունը նախաձեռնում է միջոցառումներ [10], նշյալ խնդիրը հնարավորինս պատշաճ լուծելու նպատակով:

Այսպիսով, պարենային ապրանքների, մասնավորապես ցորենի գների շարունակական աճը համաշխարհային տնտեսության մեջ համավարակից հետո և մասամբ ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով ստեղծել էին բարդ իրավիճակ: Սակայն, նշենք, որ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) հաղորդագրությանն [11] համապատասխան, հացահատիկի գների ինդեքսը 2023թ.մարտին միջինը կազմել է 138,6 կետ՝ փետրվարի համեմատ նվազելով 8,2 կետով (5,6 տոկոս) և մեկ տարի առաջվա ցուցանիշից ցածր՝ 31,6 կետով (18,6 տոկոսով): Ցորենի միջազգային գներն ամենաշատն են իջել՝ 7,1

տոկոսով՝ պայմանավորված համաշխարհային առատ մատակարարումներով և արտահանողների միջև ուժեղ մրցակցությամբ: Նվազմանը նպաստել է նաև «Սևծովյան հացահատիկի նախաձեռնության» երկարաձգումը, որը թույլ է տալիս Ուկրաինային շարունակել արտահանումը իր սևծովյան նավահանգիստներից: Ռուսաստանի Դաշնության կողմից ուժեղ մրցակցությունը, ինչպես նաև ցորենի արտադրության ծավալների բարելավումը Եվրամիությունում և Ավստրիայիայում շարունակում են նպաստել ցորենի գների անկմանը: Միաժամանակ նշյալ կազմակերպության հացահատիկային մշակաբույսերի առաջարկի եւ պահանջարկի մասին ամփոփագրում նշվում է, որ դրանց մատակարարման ծավալները 2022-2023 թվականների կանխատեսումներով պետք է շարունակեն նվազել [11], ինչն օրինաչափորեն չի կարող չանդրադառնալ դրանց գների վրա: Մինչդեռ, ցածր և միջին եկամտավով երկրներում պարենի գնաճը շարունակվում է: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ս/թ ապրիլյան զեկույցը տեղեկացնում է, որ պարենի գների ինդեքսը 2023թ.-ի ապրիլին միջինում կազմել է 127.2 միավոր՝ մարտի համեմատ աճելով 0.6%-ով [12]:

Ինչպես վկայում է Համաշխարհային բանկի 20ապրիլի 2023թ. Պարենային անվտանգության վերլուծությունը, Հայաստանում պարենային ապրանքների գնաճը 2022թ. և 2023թ. մարտ-ապրիլ ժամանակահատվածում տատանվել են 5-30%-ի միջակայքում [13]:

Այսպիսով, հակասական իրավիճակներ են համաշխարհային տնտեսության մեջ, ինչը գերազանցապես պայմանավորված է աշխարհաքաղաքական իրադարձությունների զարգացման ընթացքով: Այս խորապատկերին, ՀՀ-ում պարենամթերքի շուկայում անհանգստացնող են թե՛ ցորենի արտադրության ո՛չ բավարար ծավալները, թե՛ ներմուծման աշխարհագրական կառուցվածքը, թե՛ ներմուծումից երկրի կախվածության բարձր մակարդակը: Պարենային անվտանգության ապահովման հետ կապված այս հիմնախնդիրը, կարծում ենք օրվա հրամայականն է և վերը նշված հարցադրումներն իրենց հրատապ լուծման կարիքն ունեն:

Այսպիսով, ՀՀ ազգային տնտեսական անվտանգության ապահովման ռիսկերը բազմաթիվ են, բնականաբար մեկ հողվածի շրջանակներում հնարավոր էլ չէ ուսումնասիրել և բացահայտել բոլոր վտանգներն ու մարտահրավերները: ՀՀ տնտեսական անվտանգության մարտահրավերներն, անշուշտ բազմաթիվ են, բազմաշերտ և դրանց դիմակայել կարելի է, թերևս մեկ ճանապարհով, այն է՝ տնտեսական աճի շարունակական ապահովմամբ: Վերջինս ենթադրում է նոր աշխատատեղեր, երկրի մրցունակության բարձրացում, ֆինանսավորվող ծրագրերի առաջնահերթությունների հստակ սահմանազատում, վստահություն վաղվա օրվա նկատմամբ և ամենակարևորը՝ պետական մտածելակերպ: Չնայած 2022թ.

ՀՀ տնտեսության մեջ արձանագրվեց բարձր տնտեսական աճ [14] և այս հարթության մեջ կարևոր ձեռքբերում ենք համարում վերջին տարիների ընթացքում ՀՀ տնտեսական աճի դրական դինամիկան, բացառությամբ 2008թ. ֆինանսական ճգնաժամի և 2020թ. համավարակի պայմաններում նշյալ ցուցանիշի բացասական դրսևորումների: Չնայած, ՀՀ ՎԿ 2023թ. գարնանային հրապարակումից տեղեկանում ենք [15], որ 2023թ. մարտին նախորդ՝ 2022թ. մարտի նկատմամբ տնտեսական ակտիվության ցուցանիշն աճել է 14%-ով, արդյունաբերությունը՝ 8,6%-ով, շինարարությունը՝ 19%-ով, առևտուրը՝ 26,1%-ով, ծառայությունները՝ 21,9%-ով, արտաքին առևտրաշրջանառությունը՝ 49,5%-ով, ընդ որում արտահանումը՝ 74,1%-ով, ներմուծումը՝ 36,9%-ով: Եվ ամենակարևորը՝ ի տարբերություն նախորդ տարվա նույն ժամանակահատվածի, սպառողական գների ինդեքսը ցուցաբերել է նվազման միտում և մոտեցել է թիրախին՝ կազմելով 5,4%: Արձանագրենք, որ 2023թ. ՀՀ ՎԿ աշնանային հրապարակումներից [4] տեղեկանում ենք, որ տնտեսական աճի տեմպերն արդեն ցուցաբերում են նվազման միտում: Այսուհանդերձ, ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների նման «հաղթարշավի» մասին մենք խոսել ենք [14] և մնում է արձանագրել, որ այս ձեռքբերումը, որքան էլ գերազանցապես պայմանավորված է արտաքին գործոններով, այդուհանդերձ վկայում է ՀՀ տնտեսության ներուժային ընկալունակության և արձագանքի մասին: Պարզապես հարկ է ստեղծել նման իրավիճակի պահպանման ու զենեքացման կայուն ու անվտանգային բարձիկներ:

Այսպիսով, վերը նշված մարտահրավերներով լեցուն աշխարհում վերագլոբալացումն օբյեկտիվ անհրաժեշտություն է, որի տիրույթում Հայաստանն ու մյուս շուկայական տնտեսությամբ և զարգացող երկրներն իրենց տնտեսական քաղաքականությամբ պարտավոր են լինել առավել զգոն և ճկուն: Կնշանակի, Ազգային տնտեսական անվտանգության խնդիրներն առավել հրատապ և այժմեական հնչեղություն ունեն հատկապես փոքր տնտեսությամբ երկրների համար [16]: Այս տեսանկյունից վերջին տարիների ընթացքում ՀՀ տնտեսության մեջ տեղի ունեցած վերափոխումների ու վերաձևումների արդյունքում առավել հրատապ լուծում են պահանջում տնտեսական անվտանգության այնպիսի ներքին և արտաքին սպառնալիքներ, ինչպիսիք են՝ երկրի մրցունակության ցածր մակարդակը, տնտեսական աճի դանդաղ տեմպերը, արտաքին պարտքի ծավալները, ժողովրդագրական հիմնախնդիրները, արտագաղթը, օդի աղտոտվածության բարձր մակարդակը և այլն: Կարելի է թվարկումը շարունակել, սակայն փաստենք այն հանգամանքը, որ ազգային տնտեսական անվտանգության ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ-ը չի կարող զերծ մնալ վերոնշյալ գլոբալ զարգացումներից, ուստի և առկա սպառնալիքներին դիմակայելու պահանջից:

Ուստի և ներկա իրավիճակում ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության շրջանակներում նպատակահարմար ենք գտնում.

✚ Ընդլայնել սեփականաշնորհված հողերի նկատմամբ կառավարության կողմից իրականացվող միջոցառումների շրջանակը,

✚ Դիվերսիֆիկացնել պարենային հաշվեկշռի աշխարհագրական և ապրանքային կառուցվածքը, նոր իրողություններին համապատասխան համագործակցելով նոր գործընկերների հետ,

✚ Երկրում առաջացած «դոլարային ավելցուկն» օգտագործելու մեխանիզմներ մշակել, և ցածր տոկոսադրույքով այն տրամադրել հատկապես գյուղատնտեսության ոլորտում ընդգրկված փոքր և միջին ձեռնարկատերերին,

✚ Ֆինանսական միջոցների հասանելիություն և հարկային դաշտում գյուղատնտեսության ոլորտում միկրոձեռնարկատիրության համար ձևավորել գործունեության բարենպաստ միջավայր,

✚ Ռազմավարական զարգացումների համատեքստում առաջարկում ենք շարունակել այն միջոցառումները, որոնք ուղղված են պարենային անվտանգության ապահովմանը,

✚ և, ամենակարևորը, առանձնացնել տնտեսության զարգացման ռազմավարական առաջնահերթությունները, առաջին հորիզոնականում պահպանելով գյուղատնտեսության ոլորտի գերակայությունը,

Եզրակացություն: Դժվար է տնտեսության վրա ներքին ու արտաքին ազդեցության առաջնահերթություններից ելնելով տարբերակել ազգային տնտեսական անվտանգության ապահովման առանձին ոլորտները, սակայն, մեր կարծիքով գլոբալ հակասական և աննախադեպ զարգացումների նման իրավիճակում առավել կարևորվում է երկրի պարենային անվտանգության հիմնախնդիրն այն տեսանկյունից, որ «Սև կարապներ»-ի էլ ավելի հաճախ կարող ենք հյուրընկալել: Ուստի և հարկ է գյուղատնտեսության ոլորտի առաջընթացին միտված (որով և պայմանավորված է երկրում պարենային անվտանգության ապահովման հիմնախնդիրների լուծումը), էլ ավելի արդյունավետ և իրատեսական բարեփոխումների ճանապարհային քարտեզ մշակել՝ ելնելով հատկապես աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումների նման իրավիճակից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Թադևոսյան Զ.Ա.** «ՀՀ պարենային անվտանգության ապահովման որոշ խնդիրների շուրջ», Հայկական բանակ, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ռազմագիտական հանդես, 1(87), 2016
https://razmavaraget.files.wordpress.com/2016/06/hb_2016-n1.pdf

2. **Զիլինգարյան Դ.Ս., Սարգսյան Ա.Ե.** Պաշտպանական անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն բառարան, Երևան, 2012թ., էջ 72
3. ՀՀ ՎԿ, (ԱՐՄՍՍՍՍ), Հրապարակումներ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2022թ. հունվար-դեկտեմբեր, Սոցիալ-տնտեսական վիճակ, https://armstat.am/file/article/f_sec_4_2022_1.pdf.
4. ՀՀ ՎԿ, (ԱՐՄՍՍՍՍ), Հրապարակումներ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-հուլիսին, Մակրոտնտեսական ցուցանիշներ, https://armstat.am/file/article/sv_07_23a_03.pdf.
5. ՀՀ ՎԿ, (ԱՐՄՍՍՍՍ), Հրապարակումներ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-հունիսին, Մակրոտնտեսական ցուցանիշներ, https://armstat.am/file/article/sv_06_23a_03.pdf.
6. **Թադևոսյան Զ.Ա.** «Նոր աղքատներ՝ 21-րդ դարում, ի՞նչ է սպասվում», https://regst.wordpress.com/2022/03/31/inch_e_spasvum/
7. ՀՀ ՎԿ, (ԱՐՄՍՍՍՍ), Հրապարակումներ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2022թ. հունվար-դեկտեմբեր, Պարենի առկայություն , Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ 2019-2021թ.թ., https://armstat.am/file/article/f_sec_4_2022_3.pdf.
8. ՀՀ ՎԿ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2022թ. հունվար-դեկտեմբեր, Պարենային հաշվեկշիռի մեթոդաբանություն, https://armstat.am/file/article/f_sec_4_2022_3.pdf.
9. Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից
10. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագիր, <https://mineconomy.am/page/2209>
11. ՄԱԿ, Պարենի և Գյուղատնտեսության կազմակերպություն, Պարենի համաշխարհային իրավիճակը, 07.04.2023, <https://www.fao.org/worldfoodsituation/foodpricesindex/en/>
12. ՄԱԿ, ՊԳԿ, Պարենի համաշխարհային գների ցուցանիշը ապրիլին մեկ տարվա ընթացքում առաջին անգամ բարձրացել է, 05.05.2023,
13. https://www.fao.org/newsroom/detail/the-measure-of-world-food-prices-rose-in-april-for-first-time-in-a-year/en?fbclid=IwAR2GdWslq3c3I_wVGdzkIkVZZRcVNjRAQM5P1g4IkS97Wb7XYhVEQKux9SY
14. ՀԲ, Պարենային անվտանգություն, 20 ապրիլ, 2023թ. <https://thedocs.worldbank.org/en/doc/40ebbf38f5a6b68bfc11e5273e1405d4-0090012022/related/Food-Security-Update-LXXXIII-April-20-2023.pdf>
15. **Թադևոսյան Զ.** «Հայկական «տնտեսական հրաշքը» 2022թվականին ու հնարավոր ռիսկերը », <https://www.1in.am/3249589.html>
16. ՀՀ ՎԿ, ԱՐՄՍՍՍՍ, Մամուլի հաղորդագրություն, <https://www.armstat.am/file/doc/99537123.pdf>

17. **Թադևոսյան Ջ.** ՀՀ գիտատեխնիկական անվտանգության «դավոսյան մարտահրավերները», հոդված,
<https://www.lragir.am/2019/03/05/423062/?fbclid=IwAR14rxL4f11LoV8quiVvub41KnnXzkcGKrAiD0JPbf9X3W0IRi5UdifXFxA>

ДЖ.А. ТАДЕВОСЯН

СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ АРМЕНИИ

Нынешнее неопределенное и бурное развитие мировой экономики полно многоуровневых рисков и многогранных вызовов национальной экономической безопасности. Последние более глубоки и проявляются многими социально-экономическими противоречиями, особенно в сфере продовольственной безопасности РА. Большое беспокойство вызывают показатели, характеризующие продовольственный баланс, в частности, самообеспеченность пшеницей, уровень зависимости страны от импорта продовольствия и другие показатели.

В связи с этим в приоритетах стратегического развития Республики Армения необходимо подчеркнуть обеспечение продовольственной безопасности, принять меры в направлении наиболее эффективного использования существующего потенциала в отрасли, а также диверсифицировать как географическую, так и товарную структуру продовольственного баланса.

Ключевые слова: Национальная экономическая безопасность, макроэкономические показатели, продовольственная безопасность, показатели продовольственного баланса, уровень самообеспеченности пшеницей, степень зависимости страны от импорта.

J.A. TADEVOSYAN

THE CURRENT CHALLENGES OF ARMENIA'S ECONOMIC SECURITY

The current uncertain and turbulent developments of the world economy are full of multi-layered risks and multifaceted challenges to national economic security. The latter are more profound and manifested with many socio-economic contradictions, especially in the field of food security of RA. The indicators characterizing the food balance are of great concern, in particular, wheat self-sufficiency, the country's level of dependence on food imports, and other indicators.

In light of this, in the priorities of the strategic developments of Republic of Armenia, it is necessary to emphasize the provision of food security, to take measures in the direction of the most effective use of the existing potential in the sector, as well as to diversify both the geographical and product structure of the food balance.

Keywords: national economic security, macroeconomic indicators, food security, food balance indicators, wheat self-sufficiency level, degree of country's dependence on imports.